«Black Friday 20% cashback-ով» արշավի մասնակցության պայմաններ

1. 2026 թվականի նոյեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ ԱրարատԲանկ ԲԲԸ -ի (այսուհետ՝ Բանկ) կողմից թողարկված Visa Digital, Visa Classic, Visa Gold և Visa Infinite տեսակի քարտերի (այսուհետ՝ Քարտ կամ Քարտեր) քարտապանների (այսուհետ՝ Քարտապան կամ Քարտապաններ) համար Բանկի կողմից իրականացվում է «Black Friday 20% cashback-ով» արշավը (այսուհետ՝ Արշավ):
2. Արշավի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է Բանկի պաշտոնական կայքէջում՝ www.araratbank.am :
3. Մասնակցելով Արշավին՝ Քարտապանն անվերապահորեն ընդունում է Արշավի մասնակցության բոլոր պայմանները:
4. Արշավը նախատեսված է ինչպես գործող, այնպես էլ Արշավի իրականացման ժամանակահատվածում թողարկվող Քարտերի համար:
5. Արշավին մասնակցությունը չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ մասնակցության այլ տեսակի վճար:

Հետվճարի տրամադրման պայմաններ

6. Արշավին մասնակցելու նպատակով Քարտապանները պետք է 2026 թվականի նոյեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ Քարտերով կատարեն միջազգային վճարումներ սույն պայմանների 9-րդ կետում նշված առևտրի և սպասարկման կետերում: Միջազգային վճարումները կարող են կատարվել ինչպես ֆիզիկական POS ՝ այնպես էլ առցանց՝ վիրտուալ POS տերմինալների միջոցով:
7. Արշավի պայմաններին համապատասխանող յուրաքանչյուր Քարտապանի միանվագ տրամադրվում է սույն պայմանների 9-րդ կետում նշված առևտրի և սպասարկման կետերում կատարված, Արշավի պայմաններին համապատասխանող միջազգային վճարումների հանրագումարի 20%-ի չափով հետվճար՝ առավելագույնը 20,000 ՀՀ դրամ (առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի):
8. Հետվճարի առավելագույն՝ 20,000 ՀՀ դրամ սահմանաչափը կիրառվում է մեկ Քարտապանի նկատմամբ՝ Արշավի ամբողջ ժամանակահատվածի համար, անկախ Քարտերի քանակից:
9. Արշավի շրջանակում հետվճար կտրամադրվի այն քարտապաններին, որոնք Արշավի անցկացման ժամանակահատվածում Visa վճարային քարտերով անկանխիկ գնումներ կկատարեն հետևյալ արտասահմանյան՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ առցանց (օնլայն) առևտրի և սպասարկման կետերում՝

Zara
Mango
H&M

Amazon
Massimo Dutti
On
Adidas
Bershka
Stradivarius
Oysho
Puma
Nike
Apple

10. Արշավի շրջանակում հետվճարը Քարտապանին տրամադրվում է առանց վերջինիս համար որևէ հարկային պարտավորության առաջացման: Հետվճարի հետ կապված հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Բանկը:
11. Քարտապանի համապատասխան Քարտը հետվճարի տրամադրման պահին պետք է լինի գործող:
12. Վճարումները հաշվարկելու համար հիմք է ընդունվում գործարքի կատարման ամսաթիվը: Չեղարկված գործարքների դիմաց հետվճար չի հաշվարկվում և չի տրամադրվում:
13. Կից քարտով կատարված գործարքները ներառվում են հիմնական քարտի գործարքների ընդհանուր ծավալի հաշվարկում: Հիմնական և կից քարտերով կատարված գործարքների արդյունքում հաշվարկված հետվճարը վճարվում է հիմնական քարտապանին: Հետվճարի առավելագույն սահմանաչափը կիրառվում է միասնական՝ հիմնական և կից քարտերով գործարքների հանրագումարի համար:
14. Արշավի շրջանակում հաշվարկված միանվագ հետվճարը փոխանցվում է բացառապես Քարտապանի՝ Բանկում բացված ընթացիկ կամ քարտային դրամային հաշվին՝ մինչև 30.12.2026թ.:
15. Արշավի շրջանակում տրամադրվող հետվճարի գումարը ենթակա չէ հանձնման երրորդ անձի:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ araratbank.am, կամ զանգահարել +374 10 59 23 23 հեռախոսահամարով :